

Արսեն Է. Հարությունյան  
Պատմ. գիտ. թեկնածու

## ԳՐԻՉ ՂՈՒՆԿԻԱՆՈՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

**Բանալի բառեր** – տապանագիր, ձեռագիր, գրագիր, ձեռնադրություն, պատվիրատու, գրչարվեստ, հիշատակարան, կնքադրոշմ:

### Մուտք

Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրման տեսանկյունից անփոխարինելի սկզբնաղբյուրներ են մեզ հասած ձեռագիր մատյանները, որոնց զգալի մասը պահվում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում:

Հայ գրի ու գրչության սկզբնավորումն անմիջապես հաջորդել է Մաշտոցյան գրերի գյուտին, զարգացման հասել 12-14-րդ դդ. ու շարունակվել մինչև ուշ միջնադար, երբ ձեռագրին փոխարինելու եկավ տպագիր գիրքը: Պատմագիտական ու բանասիրական կարևոր նշանակություն ունեցող գրչարվեստի հուշարձաններ ստեղծվել են Հայաստանում ու նրա սահմաններից դուրս գտնվող տարբեր գրչության կենտրոններում գործած գրիչների, ծաղկողների, նաև նրանց աշակերտների նվիրվածության, վիթխարի աշխատասիրության շնորհիվ: Նրանց, ինչպես նաև պատվիրատու – ստացողների, կազմողների անունները, գրչության վայրն ու թվականը հաճախ վկայված են ձեռագրերի մեկ կամ մի քանի հիշատակարաններում: Վերջիններս տվյալ ձեռագրի արժանահավատ վավերագրերն են, որոնք երկար տարիներ եղել ու մնում են ինչպես հայ, այնպես էլ օտարագրի բանասերների, պատմաբանների և արվեստի պատմությամբ զբաղվողների ուսումնասիրության առարկան:

Սույն հոդվածում ներկայացվում է 18-րդ դարավերջի նշանավոր գրիչ, Ս. Էջմիածնի միաբան, Երևան քաղաքի դեռ (տեսուչ, վերահսկիչ), Սիմեոն Ա. Երևանցի (1763-1780) և Ղուկաս Ա. Կարսեցի (1780-1799) կաթողիկոսների նոտար, կոնդակագիր Ղունկիանոս արքեպիսկոպոս Աշտարակեցու՝ ցարդ պատշաճ ուշադրության չարժանացած մատենագրական վաստակը, ինչպես նաև նրա տապանագիրը:

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.02.2016:

Ը (ԺԳ) փայտի թիվ 2 (54) ամսիկ-հունիս, 2016  
Վ.Է. համահայկական հանդես

1. Ղունկիանոսի տապանագիրը և նրա անունը ժամանակի գրագրություններում ու ձեռնադրությունների ցուցակներում

Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցի գրեթե կենտրոնական մասում է գտնվում **Ղունկիանոս Աշտարակեցու** օրորոցածև տապանաքարը, որի հարավային նիստին պահպանվել է հետևյալ չափածո արձանագրությունը (7 տող)։

Վ ՂՈՒՆԿԻԱՆՈՍ՝ ՏԵՍՈՒՉՆ ԱՐ ՀԻ : Ժ  
 Կ ԷՐ ՀԱՅՐԵՆԵԱՒ ԱՇՏԱՐԱԿ ԾԻ : Ժ  
 Կ ԱՅՐ ԶՈՒԱՐՃԱԽՕՍ՝ ԱՌԱՔԻՆԻ ՆԻ : Ժ  
 Կ ԵՔԱՋ ՆՕՏԱՐ ԳԱՀԻՍ ՄԵԾԻ : Ժ  
 Կ ԱՌ ՏՐ ԳՆԱՅ ՆԼՈՂՐԱՎ ՀՈԳԻ  
 Կ ԱՐՄԻՆՆ ԵԴԱԻ ՅԱՅՍ՝ ՏԱՊԱՆ ՆԻ : Ժ  
 Կ Ի ՌՄԻԷ՛ ԵՒ ՓԵՏԻ՛Չ՛ Ժ



նկ.1

**ՂՈՒՆԿԻԱՆՈՍ ՏԵՍՈՒՉՆ ԱՐՀԻ  
 ԷՐ ՀԱՅՐԵՆԵԱՒ ԱՇՏԱՐԱԿԻ  
 ԱՅՐ ԶՈՒԱՐՃԱԽՕՍ ԱՌԱՔԻՆԻ  
 ԵՒ ԵՔԱՋ ՆՕՏԱՐ ԳԱՀԻՍ ՄԵԾԻ,  
 ԱՌ ՏՐ ԳՆԱՅ ՆԼՈՂՐԱՎ ՀՈԳԻ  
 ՄԱՐՄԻՆՆ ԵԴԱԻ ՅԱՅՍ ՏԱՊԱՆԻ  
 Ի ՌՄԻԷ. (1798) ԵՒ Ի ՓԵՏԻՎԱՐԻՂ Զ. (6)՝:**

Տապանագրում Ղունկիանոս<sup>2</sup> արքեպիսկոպոս (արհի) Աշտարակեցին հիշատակվում է նախ՝ իբրև տեսուչ, ապա՝ նոտար<sup>3</sup>։ Ինչպես **Սիմեոն Երևանցու**, այնպես էլ նրա հաջորդ **Ղուկաս Կարնեցու** կաթողիկոսական կոնդակներում, նամակներում ու զանազան գրագրություններում հաճախադեպ են Ղունկիանոս նոտարի (դպրի, գրչի) անվան հիշատակությունները։ 18-րդ դարում գործածվող ծածկագրերի վերաբերյալ **Գյուտ Աղանյանցը** նշում է, որ Սիմեոն կաթողիկոսի «Յիշատակարան»-ի առաջին հատորի ծանոթագրություններում նկատել է, որ «դեռ 1766 թուի յուլիսի 23-ին Սիմեոն կաթողիկոսը ծածկագիր նշաններով գրագրություն ունէր Ախալցխա մհ. (մահտեսի - Ա. Հ.) Յօնանի հետ տեղական հայերի մէջ կաթողիկոթեան տարածման դէմ իրանց ձեռք առած միջոցները ֆռանկ պատերներից ծածկելու համար...»<sup>4</sup>։ Սակայն, անհայտ է մնացել այդ «նորահնար գրի»

1 Տապանագիրն առաջին անգամ հիշատակվում է Գևորգյան հոգևոր ձեմարանի սան Արարատ սարկավագ Գափոյանի ավարտաճառում՝ առանց ծանոթագրության։ Տե՛ս **Արարատ սարկավագ Գափոյան (Տեր Ղևոնդ)**, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանատան արձանագրությունների վերծանություն (ավարտաճառ), Ս. Էջմիածին, 1998, էջ 104, արձ. 330։

2 Ղունկիանոս արական անձնանունն, ըստ Հր. Աճառյանի, ունի հունական ծագում, որին համարժեք են լատիներեն Lucianus կամ Lucanus, ֆրանսերեն՝ Lucian, ռուսերեն՝ Лукан, Луциан անձնանունները, և նշանակում է «լուսավոր»։ Հր. Աճառյանը կարծում է, որ անվան հայերեն ձևը պետք է լիներ Ղուկիանոս, բայց նախատությամբ դարձել է Ղունկիանոս։ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ., Եր., 1946, էջ 154։

3 Նոտարը գրիչն է, արքունի կամ եկեղեցական քարտուղարը, գրագիրը։ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հատ. երրորդ, Եր., 1944, էջ 489։

4 Դիան հայոց պատմության, գիրք ԺԱ. Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, մասն III. վերջին (1777-1779), յաւելուածներով և ծանօթութիւններով հրատարակեց Գիւտ Աղանեանց ա. քահ., Թիֆլիս, 1913, էջ 463, ծանոթ. 12։

ստեղծողի անունը: Նախկինում ենթադրվել է, թե այն հնարել է ինքը՝ Սիմեոն կաթողիկոսը, սակայն «Յիշատակարան»-ի երրորդ հատորում ուղղակիորեն վկայված է նշանագրերի հեղինակի անունը. «Նոր նշանագծոք մեր Ղունկիանոս վարդապետին»<sup>5</sup>: Այսինքն՝ ինչպես փաստում է Գյուտ քահանան. «...ծածկագիրը հնարել էր «գրագիր», «բարեբարոյ» մականունանած Աշտարակցի Ղունկիանոս վարդապետը, որ Սիմեոն կաթողիկոսի յառաջադէմ աշակերտներից մէկը լինելով՝ ապա եղավ նրա կոնդակագիրը»<sup>6</sup>:

1763-1798 թթ. էջմիածնում գրված ՄՄ Հ<sup>տ</sup> 2882 «Ժամանակագրութիւն ձեռնադրութեանց Յակովբ, Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսաց» ձեռագրի՝ Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսների ձեռնադրությունների ցուցակներում, ի թիվս Մայր Աթոռի մի շարք միաբանների, հստակ նշված է նաև Ղունկիանոս Աշտարակեցուն հոգևոր աստիճաններ շնորհելու տարեգրությունը: Ձեռագրում տեղ գտած Սիմեոն կաթողիկոսի «ձեռնադրութեանց ցուցակ»-ն առանձին հրատարակել է Գյուտ Աղանյանը<sup>7</sup>, իսկ ամբողջական ցուցակը՝ Մաշտոցյան Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գևորգ Տեր-Վարդանյանը<sup>8</sup>: Մկրտիչ ավագ սարկավագը Սիմեոն Երևանցու պատվերով գրանցել է միաբանների ձեռնադրությունները՝ մատյանի առաջին թերթում նշելով նրանց ստացած հոգևոր աստիճանները Մինաս Ակնեցի, Աղեքսանդր Բյուզանդացի և Սիմեոն Երևանցի կաթողիկոսներից: Ըստ Գ. Տեր-Վարդանյանի՝ ձեռագիրը գրվել է 1763-1798 թթ., միայն թե Մկրտիչը Սիմեոն Երևանցու ձեռնադրությունների արձանագրումից հետո մատյանի սկզբում ավելացրել է նաև Հակոբ Շամախեցու ձեռնադրած եպիսկոպոսների ցանկը<sup>9</sup>:

Ձեռնադրությունների հիշյալ ցուցակը կարևոր ու արժանահավատ վավերագիր է հատկապես 18-րդ դ. երկրորդ կեսի՝ Ս. էջմիածնի միաբանների կենսագրական տվյալների առումով: Ըստ ցուցակի՝ Ղունկիանոս Աշտարակեցին սարկավագ է ձեռնադրվել Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք՝ 1763 թ., արեղա՝ 1771 թ., իսկ 1772-ին՝ «...Ղունկիանոս, Յովհանէս, Մարտիրոս և Սողոմոն արեղայիցն ետ մասնաւոր գաւազան. ի տօնի առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, ի հինգշաբաթ, ի դէկտեմբերի ԻԷ. (27)»<sup>10</sup>: Ղունկիանոսին եպիսկոպոսության աստիճան է շնորհել Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը 1781-ին՝ «ձեռնադրեաց եպիսկոպոս... զԱշտարակեցի գրագիր Ղունկիանոս վարդապետն՝ ի միաբանութիւն Յիսնակաց բարեկենդան կիրակէին, ի հոկտեմբերի ելն»<sup>11</sup>: Իսկ 1784-ին «գրագիր» հիշվող Ղունկիանոսին. «ետ ծայրագոյն գաւազան միաբանացըն Սրբոյ Աթոռոյս... Ղունկիանոս, Ահարոն, Մարտիրոս, Ներսէս և Ստեփան եպիսկոպոսացն. յԱռաջաւորաց բարեկենդան կիրակէին, յունվարի ԻԱ. (21)»<sup>12</sup>: Վերջին տեղեկությունը թերևս վերաբերում է արքայության պատվին արժանանալուն:

Այն, որ Սիմեոն կաթողիկոսի վախճանից հետո Ղունկիանոսը դարձյալ

5 Նույն տեղում:

6 Նույն տեղում:

7 Տե՛ս նույն տեղում, էջ 453-462:

8 Տե՛ս Գ. Տեր-Վարդանյան (ստորագրված՝ Գևորգ Հունանյան), Ժամանակագրութիւն ձեռնադրութեանց (1759-1798), «էջմիածին», 1980, հոկտեմբեր, էջ 42-51:

9 Տե՛ս նույն տեղում, էջ 42:

10 Նույն տեղում, էջ 47:

11 Նույն տեղում:

12 Նույն տեղում, էջ 48:

Մայր Աթոռի առաջատար նոտարն է եղել, վկայում են Սիմեոն Երևանցուն հաջորդած Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի նամակներում ու տարաբնույթ գրագրություններում առկա հիշատակությունները: Ուսումնասիրողներից **Մ. Մսերյանցը** Ղուկասի կաթողիկոս ընտրվելու առնչությամբ նկատել է, որ Սիմեոն կաթողիկոսի վախճանից հետո գրագիր և խորհրդական Սահակ եպիսկոպոս Գեղամացու և տեղապահ Մկրտիչ եպիսկոպոսի գլխավորությամբ գումարված ժողովը պիտի ընտրեր նոր կաթողիկոսին, որի համար «...բարոք համարեցան գառաջին նուագն հրաւիրել զայս ուննս յեպիսկոպոսաց, որք յառաջաորքն էին»<sup>13</sup>: Հիշյալ ժամանակաշրջանի առաջադեմ հոգևորականների շարքում Մ. Մսերյանցը հիշատակում է նաև ոմն Ղունկիանոսի, որը, ըստ ամենայնի, Սիմեոն կաթողիկոսի շնորհաշատ գրագիր Ղունկիանոս Աշտարակեցին է, չնայած նրան, որ ըստ ձեռնադրության ցուցակի՝ այդ ժամանակ նա դեռ եպիսկոպոս չէր. «Յաւուրսն յայնոսիկ երևելիքն յեպիսկոպոսունս Էջմիածնի՝ էին Գրիգոր լուսարար (հավանաբար լուսարար Գրիգոր եպս. Եղվարդեցին է – Ա. Հ.), Պետրոս Աղամալեան գիտնական (Պետրոս Բերդումյան – Աղամալյան Նախիջևանցին է – Ա. Հ.), Մինաս, որոյ յետոյ լուսնաորեցան աչք, Ղունկիանոս, Գէորգ Կոստանդնուպօլսեցի, Յովակիմ Տաթևացի՝ Պոպ կոչեցեալ»<sup>14</sup>:

Ինչպես վերը նկատեցինք, Սիմեոնի մահից հետո Ղուկաս կաթողիկոսը 1781 թ. հոկտեմբերի 30-ին Ղունկիանոս Աշտարակեցուն ձեռնադրել է եպիսկոպոս: Նույն թվականի նոյեմբերին գրված «Թուղթ ի Բայազիտ և յՈւչքիլիսէ» խորագրով նամակում նշված է, թէ «Ուչքիլիսէի սրբոյն Յովհաննու Մկրտչի վանից առաջնորդ Մկրտիչ վարդապետն ի ներկայումս եկեալ ընդ Ղունկիանոս նօտար և ընդ Ղազար վարդապետացն, ձեռնադրեցաւ եպիսկոպոս ի սրբազան Վեհն ի հոկտեմբերի ելն»<sup>15</sup>, իսկ 1785 թ. հուլիսի կոնդակներից մեկն ուղղված է Սուրբ Աթոռից Երուսաղեմ ուխտի գնացած «...սրբոյ գահիս բնիկ միաբան և վաղեմի աշխատակիր՝ նօտար Ղունկիանոս վարդապետին»<sup>16</sup>, որ ուր ուրեք և հանդիպիցի, սիրով ընդունիցին և պատուեսցեն, և հաւատարմօք ուղևորեսցեն»<sup>17</sup>: Մայր Աթոռի ելից մատյանի՝ նույն թվականի գրառումներից մեկի համաձայն՝ Երուսաղեմ մեկնող Ղունկիանոս վարդապետի հետ նվերներ են ուղարկվել պատրիարք **Հովակիմ վարդապետ Քանաքեռցուն** (1775-1793). «Սուրբ Երուսաղեմայ պատրիարք Յովակիմ վարդապետին յղեցաք ձեռամբ Ղունկիանոս վարդապետին Ա. (1) չիչաբլու խառայ փիլոն ծիրանի, Ա. (1) լաւ մատանի կապոյտ եաղութ և Գ. (3) հոխայ սրբալոյս մեռոն՝ ի յուլիսի 23»<sup>18</sup>: Մաշտոցյան Մատենադարանի Հ<sup>տ</sup> 31, Էջմիածնում՝ 1683 թ. գրված «Դիոնիսիոս Արիսպագացի, Մատենագրութիւնք» ձեռագրի հետագայի հիշատակարաններից մեկը դարձյալ վերաբերում է Երուսաղեմ ուխտի գնացած Ղունկիանոս Աշտարա-

13 Պատմություն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմէօնէ մինչ ցՅովհաննէս Ը., ամբ Տեառն 1763-1831, գրեալ ի **Մսերայ մագիստրոսէ Մսերեանց** Զմիռնացոյ, ի Մոսկուա, 1876, էջ 5-6:

14 Նույն տեղում, էջ 6, ծանոթ. 6:

15 Դիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, **Ղուկաս Կարնեցի**, (1780-1785), հատ. Ա., աշխատասիրությամբ՝ **Վ. Գրիգորյանի**, Եր., 1984, էջ 273:

16 Թեև եպիսկոպոս էր, բայց «վարդապետ» ասելով՝ նկատի ունի նրա գիտնական լինելը:

17 Դիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, հատ. Ա., էջ 534:

18 Կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 115: Տես նաև Դիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, հատ. Ա., էջ 562, ծանոթ. 214:

կեցուն. «Ի ՌՄԼԴ. (1785) թուոջ և ի յուլիսի ԻԳ. (23), երեքշաբթի աուրն, ել Ղունկիանոս վարդապետն ի սրբոյ Աթոռոյս՝ ի գնալ յուխտ և յերկրպագութիւն սուրբ տնօրինական տեղեացն»<sup>19</sup>: Երուսաղէմում եղած ժամանակ ևս Ղունկիանոսը զբաղվել է իր սիրելի գործով՝ գրագրությամբ. այդ են վկայում այստեղ գրված ձեռագրերի հիշատակարանները, որոնք ստորև կվկայակոչենք:

## 2. Ղունկիանոս Աշտարակեցու գրչին պատկանող ձեռագրերը

Ըստ եռահատոր համառոտ ձեռագրացուցակի՝ Մաշտոցյան Մատենադարանում են պահվում Ղունկիանոս Աշտարակեցու գրչին պատկանող՝ նոտրգրով գրված շուրջ տասը ձեռագիր մատյան (սմուշները տե՛ս նկ. 3-7)<sup>20</sup>՝ **ՄՄ ձեռ. Հ<sup>Գ</sup> 2, 1880, 2289, 2499, 2646, 2652, 3281, 7424 (Գ. գրիչ), 10853**, որոնց ընդհանուր պատկերը ներկայացնում ենք ստորև բերվող աղյուսակում.

Հ <sup>Գ</sup>	Թվականը	Գրչության վայրը	Բովանդակությունը
2	1767-1768 թթ.	Էջմիածին (?)	Պետրոս Բերդումեան-Աղամայեան, Աղբիւր բացեալ
1880	1786 թ.	Երուսաղէմ	Ժողովածոյ
2289	1761 թ.	Էջմիածին	Ժողովածոյ
2499	1770 թ.	Էջմիածին	Սիմէոն Երևանցի, Մատենագրութիւնք
2646	1760-1761 թթ.	Էջմիածին	Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Հայոց
2652	1771 թ.	Էջմիածին	Ժողովածոյ
3281	1759-1774 թթ.	Երուսաղէմ	Ժողովածոյ
7424	1743, 1751, 1763 թթ.	Էջմիածին	Աւետիք Տիգրանակերտցի, Գաւազանագիրք
10853	1786-1788 թթ.	Կ. Պօլիս	Ժողովածոյ

Այս ձեռագրերի ստացողներից մի քանիսի անունները հուշում են, որ Ղունկիանոսը ժամանակի բավականին հայտնի ու բազմաշնորհ գրիչներից է եղել, ում վերապահվել է տվյալ անձանց պատվիրած մատյանները գրելու պատասխանատու գործը: Բերենք մի քանի օրինակ. ՄՄ Հ<sup>Գ</sup> 2646 «Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Հայոց» ձեռագիրը գրվել է Հա-

19 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատ. Ա., կազմեցին՝ Յ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Եր., 1984, էջ 94:

20 Ղունկիանոս Աշտարակեցու գրչին պատկանող ձեռագրերի գրչարվեստն ու կնքադրոշմներն ուսումնասիրելու նպատակով նշյալ ձեռագրերից մի քանիսը մեզ տրամադրեց Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գ. Տեր-Վարդանյանը:

կոր Ե. Շամախեցի (1759–1763) կաթողիկոսի օրոք և նրա պատվերով: Ձեռագրի գրչության հիշատակարաններում այդ մասին քանիցս վկայված է. «Գրեցաւ յաւուրսն տեառն Յակոբայ սրբասուն կաթողիկոսին Ամենայն Հայոց և Սրբոյ Էջմիածնի, հրամանաւ նորին և ձեռամբ **Ղունկիանոսի անկատար դպրի**, յըսկզբան նոր տարույս ի ՌՄԺ. (1761) թուին և ի մուտն յունվարի, մետասան ժամու աւուրն 1210 (1761) Բ.շաբթի»<sup>21</sup>, կամ «Ես՝ Յակոբոս այրս, մեղսախոց և հայրապետս մեծաց Հայոց, ետու գրել զայս՝ յինձ յիշատակ, նաս դեղ հոգույս ցաւոց»<sup>22</sup>:

ՄՄ Ը<sup>ր</sup> 2499 «Սիմէոն Երևանցի, Մատենագրութիւնք» ձեռագրի ստացողը **Հովսէփ վարդապետ, ապա արքեպիսկոպոս Արղությանն է՝** Երկայնաբազուկ Սանահնեցին: Գրչության հիշատակարանում նշվում է. «Օրինակեցմամբ գծագրեցաւ ի բուն հեղինակագծէն, ի Ղունկիանոսէ նուաստէ, ի լուսակերտ գահս Սուրբ Էջմիածին, ի վայելումն սոյնոյ վեհի աշակերտ Յովսէփ վարդապետին, յամի կենարարին 1770, և ի մերս 1219»<sup>23</sup>, իսկ ստացողի հիշատակարանը հետևյալն է. «Ի վայելումն Սանահնեցի Յովսէփ արքեպիսկոպոսին, և միաբանիցն Սուրբ Աթոռոյն Էջմիածնի»<sup>24</sup>: Վկայակոչված հիշատակարանները պարզապես հավաստում են, որ Ղունկիանոսը՝ իբրև հնուտ գրիչ, վայելել է ժամանակի նշանավոր այրերի վստահությունը:

ՄՄ Ը<sup>ր</sup> 2 «Պետրոս Բերդումեան – Աղամալեան, Աղբիւր բացեալ» ձեռագրի ստացողը ժամանակի նշանավոր ծաղկող, գրագիր, դարձյալ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում թաղված **Երեմիա արքեպիսկոպոս Օշականցին է՝**<sup>25</sup>: Վերջինս եղել է Ղունկիանոսի ժամանակակիցը, և հաճախ միասին են իրականացրել Մայր Աթոռի նոտարական, գրչագրական աշխատանքները: Նրանց անունները, ըստ ամենայնի, հիշատակվում են նաև Հակոբ Շամախեցու «Գիրք աղօթից, որ կոչի Հաց նեղելոց» (տպ. Կ. Պօլիս, 1760) գրքի «**Աղերս յիշատակի գծագրողացն գրքոյս**» բաժնում. «Այլ և աղաչեմք յիշել վերջաբար գերկոսին եղբարս՝ գնօտարս անկատար. **ըգԵրեմիաս և գՂունկիանոսս, ըգնախագրիչս տառիս փրկարար**, զի զմեզ յիշելով և դուք յիշիջիք. յամենատեսառնէն և զվարձս ընկալջիք... իսկ թիւրն մեր յոր այսք աւարտեցան հազար երկերիւր և մի եօթնական (1758)»<sup>26</sup>: Ըստ էության՝ տպագրի համար հիմք հանդիսացող ձեռագիրը Երեմիայի և Ղունկիանոսի գրչին է պատկանել: Հավանական է, որ այն ՄՄ Ը<sup>ր</sup> 10677՝ Էջմիածնում գրված «Յակոբայ Շամախեցույ Հաց նեղաւորաց և գոհարան» ձեռագիրն է, չնայած նրան, որ իբրև գրիչ և ծաղկող հիշատակվում է միայն Երեմիան:

ՄՄ Ը<sup>ր</sup> 1880, 2289, 3281, 10853 ձեռագրերում Ղունկիանոսը հիշվում է գրիչ և ստացող, իսկ ՄՄ Ը<sup>ր</sup> 7071, Երևանում՝ 1791 թ. գրված «Ժողովածոյ»

21 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատ. Ը., խմբագրութեամբ **Գ. Տէր-Վարդանանի**, Եր., 2013, էջ 916:

22 Նույն տեղում, էջ 920:

23 Նույն տեղում, էջ 260–261:

24 Նույն տեղում, էջ 262:

25 Երեմիա արք. Օշականցու ծաղկողական արվեստին ու տապանագրին անդրադարձել ենք այլ առիթով: Տեն **Ա. Հարությունյան**, Գրիչ, ծաղկող Երեմիա Օշականցին և նրա տապանագիրը, «Վէմ» համահայկական հանդես, 2014, N 3 (47), էջ 114–124:

26 Տեն Հայ գիրքը 1512–1800 թվականներին. հայ հնատիպ գրքի մատենագիտություն, [կազմեցին] **Ն. Ա. Ոսկանյան, Բ. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավալյան**, Եր., 1988, էջ 447–448:

ձեռագրում՝ ստացող. «Շնորհօքն Աստուծոյ և կարողութեամբ նորին օրինակեցաւ կանոնական բանքս ի յընտիր հեղինակէ՝ ձեռամբ յոքնամեղ և անիմաստ գրչի՝ տէր Յովհաննէս քահանայի Ջուղայեցոյ՝ **ի վայելս տեռն մեծի Ղունկիանոսի**, քաջ բարունապետի և ահրի եպիսկոպոսի Աշտարակեցոյ, որ ի սոյն թուոջ և յամենան **կարգեցաւ դէտ քաղաքիս Երևանու**, զոր Տէր ընդ երկայն ատուրս պահեսցէ՝ ի թուականութեանս Հայոց ՌՄԻ. (1791) և յունիսի ԺԱ. (11): Արդ՝ աղաչեմ զընթերցօղսդ և զվայելօղսդ յիշել առ Քրիստոս զանհնուտ գրիչս՝ հանդերձ ծնօղիւքն իմովք, և դուք յիշեալ լիջիք ահաւոր ատենին Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն»<sup>27</sup>:

Բավականին ուշագրավ հիշատակարանից պարզվում է, որ ձեռագրի ստացող **«քաջ բարունապետ»** Ղունկիանոս Աշտարակեցին նույն թվականին նշանակվել է նաև Երևան քաղաքի դետ<sup>28</sup> (տեսուչ, դիտորդ, վերահսկիչ). նկատենք, որ հիշյալ պաշտոնն անուղղակիորեն վկայված է նաև նրա տապանագրում:

Երուսաղեմում 1786–1787 թթ. գրված ՄՄ Հ<sup>տ</sup> 1880 մեծածավալ «Ժողովածոյ»-ի գրիչը և ստացողը դարձյալ Ղունկիանոս Աշտարակեցին է: Զեռագրի գրչության հիշատակարաններում քանիցս վկայված է Մայր Աթոռից Երուսաղեմ ուխտի գնացած գրչի անունը. «Ո՛վ աստուածաւեր ընթերցօղք, աղաչեմ խնդրել ի Քրիստոսէ մեղաց թողութիւն Ղունկիանոսի՝ նուաստ գրչի և յետին միաբանի Սրբոյ և մեծի Մայր Աթոռոյն Էջմիածնի, որ եկել էի յերկրպագութիւն սրբոյ յուսընկալ գերեզմանին Քրիստոսի Աստուծոյ: Ի սփոփոանս պանդխտութեան իմոյ գրեցի ի ՌՄԼԵ. (1786), ի մարտի 17, ի սուրբ յերուսաղէմ»<sup>29</sup>:

Ղունկիանոսը դեռևս Էջմիածնում՝ 1761 թ. գրված ՄՄ Հ<sup>տ</sup> 2289 դարձյալ «Ժողովածոյ» ձեռագրի գրիչն ու ստացողն է, որի մասին վկայում է ձեռագրի գրչության հիշատակարանը. «Ստացեալ եղէ ես Գիրքս քերականութեան, որ և կոչեմ Զտութիւն հայկաբանական ի **Ղունկիանոսէ ապիկար դպրէ**, ի վայելումն իւրոյ ինքեան և եղբօր նորին ի ՌՄԺ. (1761) թուին, ի յունիսի Ի.ուսն (20), ի Սուրբ Էջմիածնի»<sup>30</sup>:

Ղունկիանոս Աշտարակեցու գրչական վաստակի անբաժանելի մասն է Սիմեոն Երևանցի կաթողիկոսի հրամանով շարունակած **«Գավազանագիրք»**-ը, որ դեռևս 18-րդ դարասկզբին սկսել էր **Ավետիք Տիգրանակերտցին**<sup>31</sup>, ապա՝ լրացրել **Հակոբ Շամախեցին** (1743 թ.): Հիշյալ աշխատությունը

27 ՄՄ ձեռ. Հ<sup>տ</sup> 7071, էջ 15ա:

28 «Գէտ», «դիտ» եզրույթը փոխառված է պահլավերեն det, պարսկերեն՝ didan – տեսանել բառերից, որն ուշ շրջանի ձեռագրերում, վիճագրերում ու արխիվային վավերագրերում հաճախ է հիշատակվում: Տես **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հատ. Ա., եր., 1971, էջ 661–662: 29 Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատ. Զ., խմբագրությամբ **Գ. Տէր-Վարդանանի**, եր., 2012, էջ 365:

30 Նույն տեղում, էջ 812:

31 Պատմաբան, աղբյուրագետ Պ. Չոբանյանը, անդրադառնալով Ավետիք Տիգրանակերտցու գրչարվեստին, հիշատակում է նաև «Գավազանագիրքը», որը սկսվում է աշխարհի արարչագործությունից ու հասնում մինչև իր ժամանակները, այն է՝ 1715 թ., Աստվածատուր Համադանցի կաթողիկոսի գահակալման առաջին տարին, որի պատվերով էլ գրվել է այն: Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում է պահվում «Գավազանագրքի» չորս ձեռագիր (ՄՄ Հ<sup>տ</sup> 1492, 6243, 7424, 8072), որոնցից մեկը՝ թերի: ՄՄ Հ<sup>տ</sup> 1492 ձեռագիրը ինքնագիր է, որին հետագայում ավելացվել է Հակոբ Շամախեցու՝ ՄՄ Հ<sup>տ</sup> 7424 ձեռագրում մինչ իր ապրած ժամանակները լրացրած մասը, սակայն, ինչպես նկատում է Պ. Չոբանյանը, այն արվել է «...1788 թ. հետո, որովհետև կա նաև Սիմեոն Երևանցի կաթողիկոսի քարտուղար Ղունկիանոս գրչի շարունակությունը ևս (1748–1788 թթ.), այն ևս ավերջացնելու

տությունից էլ Գյուտ Աղանյանը վերցրել է Միմենոն կաթողիկոսի ձեռնադրությունների ցուցակը, որի առնչությամբ գրում է. «Այս միևնույն Դունկիանոս «գրիչը» Միմենոնի հրամանով շարունակեց այն գաւազանագիրքը, որ 1743 թուին սկսել էր Շամախեցի Ֆակովբ կաթողիկոսը, որից մենք քաղեցինք ներկայ հատորում տպուած Միմենոնի ձեռնադրութեանց ցուցակը»<sup>32</sup>:

«Գաւազանագրքին» անդրադարձել է նաև **Մաղաքիա արք. Օրմանյանը**<sup>33</sup> կապված Միմենոն Երևանցու նախաձեռնությամբ Մայր Աթոռում դիվանական կարգերի հաստատման հետ: Ըստ նրա՝ «Միմենոն կաթողիկոս հազիւ Պայագիտի պանդխտութենէն դարձած, հիմնական կերպով կը ձեռնարկէ Մայր Աթոռոյ մէջ կարգ ու սարք հաստատել, և իբր առաջին քայլ ոյժ կու տայ արձանագրութեանց և յիշատակագրութեանց, որոնք կը ծառայեն թէ՛ գործունեութեանց կանոնաւորութիւն տալու, և թէ՛ եղելութեանց նպատակն ու յիշատակը պահպանելու»<sup>33</sup>: Կաթողիկոսի այդօրինակ ձեռնարկումներից Մ. Օրմանյանը հիշատակում է մի քանիսը. «Նախ Գաւազանագիրք մը, զոր կանուխէն հաստատած էր Շամախեցի, բայց ընդհատուած ըլլալուն համար Դունկիանոս Աշտարակեցի դպիրին պաշտօն տրուեցաւ զայն շարունակել: Առանձինն նուիրակութեանց մասին տեղեկութիւններ հաւաքելու գործը յանձնեց **Երեմիա նոտարին**, որ նշանակէ իւրաքանչիւր թեմին նուիրակը, անոր արդիւնաւորութիւնը և զանազան խնդիրները»<sup>34</sup>: Վերջինս Դունկիանոսի ժամանակակից գրագիր, ծաղկող վերոհիշյալ Երեմիա Օշականցին է:

ՄՄ Ը<sup>ր</sup> 1492 «Ժողովածոյ» ձեռագիրը բովանդակում է հեղինակ – գրիչներ Ավետիք Տիգրանակերտցու, Հակոբ Շամախեցու, ապա Դունկիանոսի «Գիրք պատմութեանց, որ կոչի Գաւազանագիրք» աշխատությունը<sup>35</sup>: Նույնարժանողակ են նաև ՄՄ Ը<sup>ր</sup> 7424 (գրված 1743, 1751, 1763 թթ., էջմիածնում), ինչպես նաև ավելի ուշ՝ 1847 թ. Ալեքսանդրապոլում գրիչ Համբարձում մահտեսի Հարությունյանի ընդօրինակած ՄՄ Ը<sup>ր</sup> 6243 ձեռագրերը:

Դունկիանոս Աշտարակեցու անունը վկայված է նաև հնատիպ գրքերից մեկի հիշատակարանում: Էջմիածնի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» նորահաստատ տպարանում, Հայոց ՌՄԻԴ. (1775) թվականին Միմենոն Երևանցի կաթողիկոսի աշխատասիրությամբ լույս տեսած «**Տօնացոյց**»-ի Բ. հատորի ծավալուն հիշատակարանում վկայված է Մայր Աթոռի «**հարազատ միաբան և գրագիր**» Դունկիանոս Աշտարակեցին: Հիշատակարանում գիրքը «վայելողներից» հայցվում է նախ տալ. «...փառս Ա[ստուծոյ] յաջողողին և տնօրինողին ամ[ենայն]ի: Եւ ապա յիշեսցիք ջերմեռանդ ըղձի զվերոյ յիշեալ բարեմիտ և յոգնաջան Հայր[ա]յ[ե]տս մեր...»<sup>36</sup>, ապա հիշվում են բոլոր նրանց անունները, ովքեր իրենց մասնակցությունն են ունեցել գրքի ստեղծման գործում. այդ թվում նաև. «Ընդ սինն և յիշեսցիք **զհարազատ**

դիտավորությամբ և էջակաված է առանձին»: Տե՛ս **Չորանյան Գ. Ա.**, Նոր նյութեր Ավետիք Տիգրանակերտցու մասին «Լրաբեր հաս. գիտ.», N 7, 1973, էջ 98-99:

32 Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԱ. Միմենոն կաթողիկոսի յիշատակարանը, էջ 463, ծանոթ. 12:

33 Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանյան**, Ազգապատում, Բ. հատոր, Ս. էջմիածին, 2001, էջ 3499-3500:

34 Նույն տեղում, էջ 3500:

35 Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ., կազմեցին՝ **Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան**, Եր., 2008, էջ 1425:

36 Հայ գիրքը 1512-1800 թվականներին..., էջ 498:



**միաբան և զանձանձիր գրագիրն** ս[ր]բ[ոյ] և մեծի Աթոռոյս զՂունկիանոս վ[ա]րդ[ա]լ[ե]տն Աշտարակցի, որ բաց ի հաս[ա]ր[ա]կ պաշտօնէն իւրմէ, քանիցս վերակրկնելով պարզագրե[ա]յց զգիրքս զայս մեծաւ աշխատութեամբ ի շաղագրեցմանէ հեղինակին»<sup>37</sup>:

ՄՄ՝ հիմնականում Էջմիածնում գրված մի շարք ձեռագրերում (ՄՄ Հ<sup>4</sup> 704, 710, 874, 1100, 1546, 1576, 2182, 2289, 2340, 8763, 9563 և այլն) պահպանվել է Ղունկիանոս Աշտարակեցու անվանակիր շրջանաձև կամ ութանկյուն կնքադրոշմը (Նկ. 8, 9), որի վրա սովորաբար նշվում էր «**ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԳՈՒՆԿԻԱՆՈՍ ՎԱՐԳԱՊԵՏ**». դրանք հիմնականում թվագրված են 1760–1780 թթ.: Այս փաստը ևս վկայում է Ղունկիանոսի՝ Մայր Աթոռում առաջատար նոտարի կարգավիճակ ունենալու հանգամանքը:

Պատմաբան **Վ. Գրիգորյանը** նշում է, թե Մանուել Կյունուշխանեցու «Յաղագս մահտարածամի, որ է յերկիրն Թիֆլիզոյ և յԷջմիածին և ի գիւղս Վաղարշապատ» անտիպ աշխատության մեջ<sup>38</sup> վկայություններ են պահպանվել 18-րդ դարավերջին տարածված ժանտախտ համաճարակի մասին: 1797 թ. գարնանն Էջմիածնում այդ հիվանդությունից մահանում են նաև մի շարք հոգևորականներ, որոնց թվում և՛ Ղունկիանոս Աշտարակեցին<sup>39</sup>: Այն, որ տապանագրում մահվան տարեթիվը մեկ տարի ուշ է, հիմնավորվում է ներքոնշյալ տեղեկությամբ:

Մայր Աթոռի միաբանության մեջ տարածված համաճարակի ու աղետալի դեպքերի առնչությամբ վկայություններ են պահպանվել նաև Ղուկաս կաթողիկոսի՝ 1799 թ. փետրվարի 12-ին Էջմիածնից ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանին ուղղված թղթերից մեկում. «... յամէ Տեառն 1797 և ի նոյեմբեր ամսոյն մինչև ի 1798 և ի մարտ ամիսն աւելի քան զԺ. (10) եպիսկոպոսք վախճանեցան զանազան ցաւօք և պատահաբօք, որ թէպէտ մահն հասարակաց է, և չէ ապշելի, սակայն ի կարճ միջոցի այնքանեաց մի զկնի միոյ պակասիլն ի միջոյ զբազմապատիկ սուգ պատճառեաց մեզ, որոց երևելիքն և ծանօթքն քեզ **Ղունկիանոս բարեբարոյն** և Ներսէս և Յակոբեանք եպիսկոպոսք»<sup>40</sup>: Ծանոթագրություններում նշվում է, որ «Ղունկիանոս «բարեբարոյ» կոչուած եպիսկոպոսը նոյնպէս ժամանակի հայագէտ եկեղեցականն էր. նա Սիմէօն կաթողիկոսի կոնդակագիրն էր և նորա նշանաւոր յիշատակարանի հեղինակներից մէկը»<sup>41</sup>:

Մինչ Ղունկիանոսի գրչական վաստակն ամբողջացնող սույն համառոտ շարադրանքի ամփոփումը՝ նշենք, որ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում է հանգչում նաև նրա մայրը. օրորոցաձև տապանաքարի

37 Նույն տեղում:

38 Տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժին, Ալ. Երիցյանի անձնական արխիվ, թղթ. 156, վավ. 142: Գյուտ Աղանյանցի աշխատասիրությամբ հրատարակված Մանուել Կյունուշխանեցուն վերաբերող գրքում ևս վկայություն կա ժանտախտ համաճարակի և Ս. Գեղարդի զորությամբ դրա բուժման մասին: Դիան հայոց պատմության, գիրք ԺԲ., Մանուել Կյունուշխանեցի, մասն I, ծանօթություններով հրատարակեց **Գիտ ա. ք. Աղանեանց**, Թիֆլիս, 1917, էջ 104–109:

39 Տե՛ս Դիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, էջ 34: Տե՛ս նաև **Վ. Գրիգորյան**, Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780–1800), Եր., 1958, էջ 188:

40 Դիան հայոց պատմության, գիրք Թ., Յովսեփ կաթողիկոս Արղության, մասն առաջին. 1778–1800, յաւելումներով և ծանօթութիւններով հրատարակեց **Գիտ ա. քահ. Աղանեանց**, Թիֆլիս, 1911, էջ 261–262:

41 Նույն տեղում, էջ 510, ծանոթ. 53:

հարավային նիստին հետևյալ չափածո արձանագրությունն է (9 տող, հանգավորումն արտահայտված տողատման շեղ գծով).

ՀՆՈՐՀՕՂ ՊԱՐՏԵԱՅ ՏՐ ԳԹՈՒԹԵՆ ՈՂՈՐՄԵՍՅԻՍ ՔՈՒՄ ԳԱԼՍԵՆ Է  
 Ի ԻԹԵԱԼ ԱՅՐՈՒՅՍ Զ ԱՄԵԱՆ ՀՆՈՐՀԵՍՅԵՍ ԶԿԵԱՆՍ ԱՆՎԱԽՃԱՆ Է  
 Է ԱԵՆ ՕՐՀՆԵԱԼ ՔՈՅԻ ՏԵՍՈՒ ԹԵՆ ՆԱԵ Զ ԱՅՆԻԴ ԵՐԱՆԱ ԿԱՆ Է  
 Է ԱՐԺԱՆԱՅՈ ՋՀՈԳԻ ՍՈ ՐԱՅՆ ԶԱԶՄԷ ԴԱՍԵԱ ԸՆԴՍՔՍ ԱԵՆՅՆ Է  
 Է ԵՄԱՅՐ ՊԵՏԻՆ ՂՈՒՆԿԻԱՆՈՍԻ ԱՍՏՈՒԱԾԱԵԶ ԳԱՀԻՍ ԳԸՐԶԻ Է  
 Է ՅԱԶԳԷ ԽԱԶԱՆԵԱՆ ԱՇՏԱՐԱԿ ՅԻ ՍԻՐԱՎԱՌ ԸՂԶԻ Ի ԱՍՏ ԱՄՓՈՓԻ Է  
 Է ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ՈՎ ՍԻՐԵ ԼԻՔ ՄԻ ԽՆԱՅԻՅԷՔ ՏԱԼ ԶՈՂՈՐՄԻ Է  
 Է ԶԵՐ ԿՐԿՆԱԿ ԾՆՈՂԱՅՆ Է ԶԵԶ ՔՍ ԱԾ ՈՂՈՐՄԵՍ ՅԻ Է  
 Է ՈՒՄԼԻ Ի ԱՐՏԻ Ի Է



սկ. 2

ՀՆՈՐՀՕՂ ՊԱՐՏԵԱՅ ՏՐ ԳԹՈՒԹԵԱՆ / ՈՂՈՐՄԵՍՅԻՍ ՔՈՒՄ ԳԱԼՍԵԱՆ /  
 Ի ԻԹԵԱԼ ԱՅՐՈՒՅՍ Զ. (80) ԱՄԵԱՆ / ՀՆՈՐՀԵՍՅԵՍ ԶԿԵԱՆՍ ԱՆՎԱԽՃԱՆ /  
 ԱՄԵՆՕՐՀՆԵԱԼ ՔՈՅԻ ՏԵՍՈՒԹԵԱՆ / ՆԱԵԻ ԶԱՅՆԻԴ ԵՐԱՆԱԿԱՆ /  
 ԱՐԺԱՆԱՅՈ ՋՀՈԳԻ ՍՈՐԱՅՆ / ՅԱԶՄԷ ԴԱՍԵԱ ԸՆԴ ՍՐԲՈՑՍ ԱՄԵՆԱՅՆ /  
 Է ՄԱՅՐ ՊԵՏԻՆ ՂՈՒՆԿԻԱՆՈՍԻ / ԱՍՏՈՒԱԾԱԵԶ ԳԱՀԻՍ ԳԸՐԶԻ /  
 ՅԱԶԳԷ ԽԱԶԱՆԵԱՆ ԱՇՏԱՐԱԿՅԻ / ՍԻՐԱՎԱՌ ԸՂԶԻ ԱՍՏ ԱՄՓՈՓԻ, /  
 ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ՈՎ ՍԻՐԵԼԻՔ / ՄԻ ԽՆԱՅԻՅԷՔ ՏԱԼ ԶՈՂՈՐՄԻ /  
 ԶԵՐ ԿՐԿՆԱԿ ԾՆՈՂԱՅՆ ԵԻ ԶԵԶ ՔՍ ԱԾ ՈՂՈՐՄԵՍՅԻ /  
 ՈՒՄԼԻ. (1783), Ի ԱՐՏԻ Ի. (20)<sup>42</sup>:

Ըստ տապանագրի՝ Ղունկիանոսի մայրը, որը հիշատակվում է իբրև մայր «Աստուածաէջ գահիս» գրիչ Ղունկիանոս Աշտարակեցու, կյանքից հեռացել է 1783 թ.: Տապանագրից պարզվում է, որ Ղունկիանոսի տոհմանունը **Խաչանեան** է, կարևոր մի փաստ, որը չի հիշատակվում նրա տապանագրում: Ուշագրավ է նաև վիմագրում մայր տաճարն «Աստուածաէջ գահ» ձևով բնութագրումը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է արձանագրել, որ Ս. Էջմիածնի միաբան, Երևան քաղաքի դեռ (առաջնորդ, տեսուչ, վերահսկիչ) Ղունկիանոս արքեպիսկոպոս Աշտարակեցին 18-րդ դ. երկրորդ կեսի մայր Աթոռի բազմաշնորհ գրագիր – նոտարներից մեկն էր, որն իր արհեստավարժ գրչի, բնատուր տաղանդի շնորհիվ գնահատվել ու

42 Տե՛ս Արարատ սարկավազ Գափոյան, նշվ. աշխ., էջ 104, արձ. 332:

արժանացել է Ամենայն Հայոց կաթողիկոսներ Հակոբ Շամախեցու, Սիմեոն Երևանցու և Ղուկաս Կարնեցու վստահությանն ու բարեհաճ վերաբերմունքին: Նրա թողած մանր, բայց պարզ ու ինքնատիպ տառերով ընդօրինակած ձեռագիր մատյանները հայ գրչության արվեստի մնայուն արժեքներ են:

**Արսեն Է. Հարությունյան** – Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ վիճագրությունն ու ձեռագրագիտությունը: Ուսումնասիրում է հատկապես Արմավիրի մարզի վիճագրական ժառանգությունը: Շուրջ չորս տասնյակ գիտական հոդվածների հեղինակ է, որոնց մեծ մասը նվիրված է հայոց հոգևոր կենտրոն Վաղարշապատի վանքերի նորահայտ արձանագրություններին:

## Summary

### THE EPITAPH OF CLERK GHUNKIANOS ASHTARAKETSI AND HIS LITERARY MERIT

Arsen E. Harutyunyan

**Key words** – epitaph, manuscript, copyist, ordination, customer, art of copying, monument, seal.

Archbishop Ghunkianos Ashtaraketsi, a cenobite of St. Etchmiadzin, a prominent clerk of the second half of the 18th century, the notary, encyclicalist of the catholicoses of Simeon I Yerevantsi (1763–1780) and his successor Ghukas I Karnetsi (1780–1799), the “det” of the city of Yerevan (controller, overseer), is one of the most proficient spiritual figures of the Armenian church. The literary merit of clerk Ghukianos is presented by around ten cursive manuscript writings (N 2, 1880, 2289, 2499, 2646, 2652, 3281, 7424, 10853) generally preserved at Mashtots Institute of Manuscripts.

Num.	Date	Place of the scripture	Content
2	1767–1768	Etchmiadzin (?)	Petros Berdumyan–Aghamalyan, Aghbiour batseal
1880	1786	Jerusalem	Digest
2289	1761	Etchmiadzin	Digest
2499	1770	Etchmiadzin	Simeon Yerevantsi, Bibliography
2646	1760–1761	Etchmiadzin	Movses Kaghankatuatsi, History of Armenian People
2652	1771	Etchmiadzin	Digest
3281	1759–1774	Jerusalem	Digest
7424	1743, 1751 1763	Etchmiadzin	Avetik Tigranakerttsi, Gavazanagirk (Chronicle of patriarchs)
10853	1786–1788.	Constantinople	Digest

The names of some of the initiators of the above-mentioned manuscripts prompt that Ghukianos used to be one of the most prominent and talented scribes of his time to whom the responsible work of writing the manuscripts was entrusted by the respective persons. For example, by the order and under the Catholicos Hakob V Shamakhetsi (1759–1763) Ghunkianos wrote the manuscript N 2646 in 1761 which the record of the manuscript testifies about.

The annals on ordaining Ghunkianos Ashtaraketsi spiritual degrees is best manifested in the ordination lists of the catholicoses Simeon and Ghukas of N 2882 manuscript of “Chronicle of ordinations” (N 2882) preserved in Matenadaran after Mashtots. Among them the register compiled by Catholicos Simeon is an important and trustworthy document in regard with the biographies of St. Etchmiadzin friary of the second half of the 18th century. According to the register Ghunkianos Ashtaraketsi was ordained a deacon under the Catholicos of Simeon Yerevantsi in 1763, a monk in 1771, a preceptor (abuna, vardapet) in 1772 and under Ghukas Karnetsi Ghunkianos he was granted a degree of an bishop in 1781. After three years in 1784, Ghunkianos, usually mentioned as a “clerk”, was granted an “ultimate wand” which is, perhaps, dignifying with a title of archbishop.

“Gavazanagirk” (chronicle of kings and patriarchs) is an inseparable part of a literary merit of Ghunkianos Ashtaraketsi continued by the latter on the order of Catholicos Simeon, a work commenced by Avetik Tigranakertsi still in the beginning of the 18th century and later replenished by Hakob Shamakhetsi (1743). Gyut Aghanyants took the ordination list of Catholicos Simeon from the mentioned work. N 1492 manuscript “Digest” of Matenadaran after Mashtots contains the very work of author-writers Avetik Tigranakertsi, Hakob Shamakhetsi, and then Ghunkianos: N 7424 manuscript of Matenadaran (written in 1743, 1751, 1763 in Etchmiadzin), as well as N 6243 manuscript later copied by the clerk of mahdesi (pilgrim of Jerusalem) Hambardzum Harutyunyan in Alexandropol in 1847 also have the same context.

The circular or octagon seal bearing the name of Ghukianos Ashtaraketsi has preserved in a series of manuscripts of Matenadaran mainly written in Etchmiadzin (N 704, 710, 874, 1100, 1546, 1576, 2182, 2289, 2340, 8763, 9563 etc.) on which it was usually mentioned: “SERVANT OF CHRIST, PRECEPTOR GHUNKIANOS” (ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՂՈՒՆԿԻԱՆՈՍ ՎԱՐԳՎԱՊԵՏ); they are mainly dated by the years of 1760–1780. This fact also testifies about the high position and status of a leading notary in the face of Ghunkianos in the Holy See of St. Echmiadzin.

It is noteworthy that Ghukianos died at the end of the 18th century from the plague epidemic. According to the inscription of his recently found cradle-form gravestone in the monastic cemetery of St. Etchmiadzin it took place on February 6 of 1798. His mother rests in the same cemetery and where, according to her gravestone epitaph, she is the mother of; “...the lord Ghunkianos, the clerk of the God-descended throne” «...պետին Ղունկիանոսի, Աստուածալէջ գահիս գրըչի...».

## ЭПИТАФИЯ ПЕРЕПИСЧИКА ГУНКИАНОСА АШТАРАКЕЦИ И ЕГО ЛЕТОПИСНЫЙ ТРУД

Арсен Э. Арутюнян

**Ключевые слова** – эпитафия, рукопись, писец, рукоположение, заказчик, искусство переписывания, памятник, печать.

Переписчик второй половины 18-го века, нотариус и кондакописец католикосов Симеона I Ереванци и Гукаса I Карнеци, дет (управляющий, контролер) города Еревана, священнослужитель Св. Эчмиадзина Гункианос архиепископ Аштаракеци является одним из знаменитых деятелей армянской церкви. Некоторые рукописи Гункианоса написанные как “нотргир”, хранятся в собрании Матенадарана им. Месропа Маштоца (N 2, 1880, 2289, 2499, 2646, 2652, 3281, 7424, 10853). На основе этих рукописей представлен летописный труд переписчика Гункианоса.

№	Время написания	Место написания	Содержание
2	1767-1768 гг.	Эчмиадзин (?)	Петрос Бердумян-Агамалян, “Агбюр бацеал”
1880	1786 г.	Иерусалим	Сборник
2289	1761 г.	Эчмиадзин	Сборник
2499	1770 г.	Эчмиадзин	Симеон Ереванци, Библиография
2646	1760-1761 гг.	Эчмиадзин	Мовсес Каганкатваци, История армянского народа
2652	1771 г.	Эчмиадзин	Сборник
3281	1759-1774 гг.	Иерусалим	Сборник
7424	1743, 1751, 1763 гг.	Эчмиадзин	Аветик Тигранакертци, Хронологическая таблица католикосов
10853	1786-1788 гг.	Константинополь	Сборник

Имена нескольких заказчиков этих рукописей подсказывают, что Гункианос был известным и одаренным переписчиком в данной эпохе, которому доверяли ответственное дело – написание рукописей заказчиков. Например, рукопись Матенадарана N 2646 Гункианос написал во времена католикоса Акопа V Шамахеци и по его же заказу в 1761 г., о чем свидетельствуют записки рукописи. Летопись рукоположение Гункианоса лучше выявляется в списках католикосов Симеона и Гукаса, сохранившихся в рукописи Матенадарана N 2882, под названием “Хронография рукополо-

ՀԱՅԿԱՍՏԱՆԹՅՈՒՆ

Ը (ԺԳ) քարթ. թիվ 2 (54) ամբիւր-հանիւր, 2016

ՎԿԱ հանձնարարական հանձնարես

женных”. Список Симеона католикоса является важным и достоверным документом раскрывающим биографии священнослужителей Св. Эчмиадзина во второй половине 18-го века. Согласно списку, Гункианос Аштаракечи был рукоположен как дьякон во времена католикоса Симеона Ереванци в 1763 г., как иеромонах в 1771 г., и как вардапет в 1772 г., а во времена Гукаса Карнеци Гункианос был рукоположен епископом в 1781 г. Три года спустя, в 1784 г. Гункианоса, который упоминается как “писарь” (грагир), также одарили “верховой тростью”, которой удостаивали в честь архиепископства.

Неотделимой частью летописных трудов Гункианоса Аштаракечи является “Гавазанагирк” (хронологическая таблица католикосов), который он продолжал по приказу Симеона Ереванци. Этот документ в начале 18-го века начал писать Аветик Тигранакертци, и дополнил Акоп Шамахеци в 1743 г. Из этой таблицы Гюг Аганянц взял список рукоположенных Симеоном Ереванци. Рукопись Матенадарана N 1492 “Сборник” содержит упомянутые работы авторов – переписчиков Аветика Тигранакертци, Акопа Шамагеци, а также Гункианоса Аштаракечи. Одиноковое содержание имеют также рукописи Матенадарана N 7424 (написано в Эчмиадзине в 1743, 1751, 1763 гг.) и N 6243 написано немного позже в 1847 г., в Александрополе переписчиком Амбарцумом “магтеси” Арутюнян.

На нескольких рукописях Матенадарана, написанных в основном в Эчмиадзине (N 704, 710, 874, 1100, 1546, 2182, 2289, 2340, 8763, 9563 и т.д.), сохранилась также кругообразная или восьмиугольная печать Гункианоса Аштаракечи на котором обычно было отмечено “СЛУЖИТЕЛЬ ХРИСТОСА ГУНКИАНОС ВАРДАПЕТ”. Эти печати датируются приблизительно 1760–1780 годами. Этот факт также свидетельствует о том, что Гункианос был главным нотариусом Св. Эчмиадзина.


Гункианос Аштаракечи скончался от эпидемии чумы в конце 18-го века. Согласно новонайденной эпитафии на монастырском кладбище Св. Эчмиадзина, это произошло 6 февраля 1798 года. На этом кладбище похоронена также мать “...Ղուկիանոսի, Աստուածախէջ գահիս գրչի...” (мать Гункианоса, переписчика Св. Эчмиадзина).

# ՆՄՈՒՇՆԵՐ ՂՈՒՆԿԻԱՆՈՍ ԱՇՏԱՐԱԿԵՅՈՒ ԳՐՉԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԿՆՔԱԴՐՈՇՄՆԵՐԻ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ը (ԺԳ) ԳԱՅՐԻ ԹԻՒՆ 2 (54) ԱՍՊԻԿԻ-ԽԱՆՍԻՍ, 2016

ՎԿԱ ԽԱՄԱԿԱՅԻԿԱԿԱՆ ԽԱՆՁՐԵԱ



Նկ. 3 ՄՄ Հ<sup>տ</sup> 2289, էջ 215ա



Նկ. 4 ՄՄ Հ<sup>տ</sup> 3281, էջ 8ա



Նկ. 5 ՄՄ Հ<sup>տ</sup> 1881, էջ 3ա



Նկ. 6 ՄՄ Հ<sup>տ</sup> 2289, էջ 4ա



Նկ. 7 ՄՄ Հ<sup>տ</sup> 3281, էջ 22ա



Նկ. 8 ՄՄ Հ<sup>տ</sup> 704, էջ 105բ



Նկ. 9 ՄՄ Հ<sup>տ</sup> 3281, 115ա